«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

14 Ապրիլի 2021, N 9 - 2

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Լսելով և քննարկելով «Ուսումնական աշխատանքների ծավալի հաշվարկի նորմատիվները հաստատելու, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 29-ի, 2019 թվականի հունիսի 18-ի N 4, 2021 թվականի մարտի 2-ի N 8 - 4 որոշումները ուժը կորցրած ճանաչելու, «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» և «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություն կատարելու մասին» հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ա.Վ.Գրիգորյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

   1) Հաստատել ուսումնական աշխատանքի ծավալի հաշվարկի հետևյալ նորմատիվները.

N	Անվանումը	Նորմատիվները
1.	Ավարտական աշխատանքի ղեկավարում (առկա և հեռակա ուսուցում)	20 ժամ ղեկավարում 5 ժամ գրախոսություն (բաշխումը՝ ավարտական կուրսի ուսումնական տարվա ավարտական կիսամյակում)
2.	Մագիստրոսական թեզի ղեկավարում (առկա և հեռակա ուսուցում)	30 ժամ ղեկավարում 8 ժամ գրախոսություն (բաշխումը՝ ավարտական կուրսի ուսումնական տարվա ավարտական կիսամյակում)
3.	Ուսումնաարտադրական փորձառություն (առկա և հեռակա ուսուցում)	Ուսանողների թիվ*շաբաթների թիվ*0,3 ժամ

4.	Գիտահետազոտական և հետազոտական փորձառություն (առկա և հեռակա ուսուցում)	Ուսանողների թիվ*շաբաթների թիվ*0,4 ժամ
5.	Գիտամանկավարժական փորձառություն (առկա և հեռակա ուսուցում)	Ուսանողների թիվ*շաբաթների թիվ*0,4 ժամ
6.	Խորհրդատվություն քննությամբ ավարտվող դասընթացների համար (բակալավրիատի առկա և հեռակա ուսուցում)	Ընդհանուր լսարանային ժամերի 20%-ը
7.	Խորհրդատվություն՝ ստուգարքով ավարտվող դասընթացների համար (բակալավրիատի առկա ուսուցում)	Ընդհանուր լսարանային ժամերի 10%-ը
8.	Խորհրդատվություն ստուգարքով ավարտվող դասընթացների համար (բակալավրիատի հեռակա ուսուցում)	0՝ ժամ նախատեսված չէ
9.	Խորհրդատվություն քննությամբ ավարտվող դասընթացների համար (մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցում)	Ընդհանուր լսարանային ժամերի 10%-ը
10.	Խորհրդատվություն քննությամբ ավարտվող դասընթացների համար, որոնք պարունակում են գիտահետազոտական աշխատանք կամ դասընթացում ներառված փորձառության բաղադրիչ (մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցում)	Ընդհանուր լսարանային ժամերի 20%-ը
11.	Խորհրդատվություն ստուգարքով ավարտվող դասընթացների համար (մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցում)	0՝ ժամ նախատեսված չէ
12.	Ստուգարք	1 ուսանողը 0,25 ժամ
13.	Քննություն	1 ուսանողը 0,5 ժամ
14.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ	1 ուսանողը 0,5 ժամ

15.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ	1 ուսանողը 0,25 ժամ
16.	Մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավար	50 ժամ (նույն անձին, ՄԿԾ ամբողջ ընթացքում՝ յուրաքանչյուր ուսումնական տարի)
17.	Բակալավրի կրթական ծրագրի ղեկավար	50 ժամ (նույն անձին, ՄԿԾ ամբողջ ընթացքում՝ յուրաքանչյուր ուսումնական տարի)
18.	Գիտական խորհրդին կից հանձնաժողովի անդամ	50 ժամ
19.	Ֆակուլտետի խորհրդի անդամ	30 ժամ
20.	Ասպիրանտուրայի որակավորման քննություն	Յուրաքանչյուր քննող դասախոսին՝ 10 ժամ
21.	Ասպիրանտի ղեկավարում	1 ասպիրանտը՝ 50 ժամ 1 հայցորդը՝ 30 ժամ

2) Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 29-ի «Ուսումնական պլանի նորմատիվներում փոփոխություններ կատարելու մասին» որոշումը:
3) Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 18-ի «Ուսումնական աշխատանքների ծավալի նորմատիվները հաստատելու մասին» N 4 որոշումը:
4) Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 2-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 8 - 4 որոշումը:
5) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» 2-րդ գլխի 2.2-րդ կետի 2.2.2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:
6) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» 2-րդ գլխի 2.2-րդ կետի 2.2.2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

2. Լսելով և քննարկելով «Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները հաստատելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 18-ի N 3 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Ա.Վ.Գրիգորյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1) Հաստատել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հետևյալ նորմատիվները.

N	**Պաշտոնը**	**Նորմատիվները**
1.	**Լրիվ բեռնվածությամբ (1,0 դրույքով) աշխատողների համար**	
1)	Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր	700-780
2)	Ամբիոնի վարիչ, դոցենտ	700-780
3)	Ամբիոնի պրոֆեսոր	720-800
4)	Ամբիոնի դոցենտ	740-820
5)	Ամբիոնի ավագ դասախոս	760-850
6)	Ամբիոնի դասախոս	780-870
7)	Ամբիոնի ասիստենտ	800-900
2.	**Ոչ լրիվ բեռնվածությամբ (0,25-0,75 դրույքով) կամ համատեղությամբ աշխատողների համար**	
1)	Ամբիոնի պրոֆեսոր 0,25	180-200
2)	Ամբիոնի պրոֆեսոր 0,5	360-400
3)	Ամբիոնի պրոֆեսոր 0,75	550-610
4)	Ամբիոնի դոցենտ 0,25	200-220
5)	Ամբիոնի դոցենտ 0,5	380-420
6)	Ամբիոնի դոցենտ 0,75	570-630
7)	Ամբիոնի ավագ դասախոս 0,25	220-240
8)	Ամբիոնի ավագ դասախոս 0,5	400-440
9)	Ամբիոնի ավագ դասախոս 0,75	590-650
10)	Ամբիոնի դասախոս 0,25	240-260
11)	Ամբիոնի դասախոս 0,5	420-460
12)	Ամբիոնի դասախոս 0,75	610-670
13)	Ամբիոնի ասիստենտ 0,25	260-280
14)	Ամբիոնի ասիստենտ 0,5	440-480

15)	Ամբիոնի ասիստենտ 0,75	630-690
3.	**Դասախոսական կազմի յուրաքանչյուր տարակարգի համար նվազագույն լսարանային ժամեր**	
1)	0,25 դրույք բեռնվածություն	90
2)	0,5 դրույք բեռնվածություն	180
3)	0,75 դրույք բեռնվածություն	265
4)	1,0 դրույք բեռնվածություն	350
5)	Ամբիոնի վարիչ՝ 1,0 դրույք բեռնվածությամբ	250
4.	**Դասախոսական կազմի յուրաքանչյուր տարակարգի համար լսարանային ժամերի նվազագույն հարաբերակցությունն ըստ ուսումնական տարվա կիսամյակների**	
1)	0,25 դրույք բեռնվածություն	80/20 (20/80)
2)	0,5 դրույք բեռնվածություն	70/30 (30/70)
3)	0,75 դրույք բեռնվածություն	70/30 (30/70)
4)	1,0 դրույք բեռնվածություն	70/30 (30/70)
5)	Ամբիոնի վարիչ՝ 1,0 դրույք բեռնվածությամբ	70/30 (30/70)
5.	**Դասախոսական կազմի յուրաքանչյուր տարակարգի համար ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ղեկավարման առավելագույն թիվ՝ անկախ բեռնվածությունից (դրույքից)**	
1)	Ամբիոնի պրոֆեսոր	Մագիստրոսական թեզ՝ 7 Ավարտական աշխատանք՝ 10 **Հանրագումարում՝ ոչ ավելի, քան 10 ղեկավարում**
2)	Ամբիոնի դոցենտ	Մագիստրոսական թեզ՝ 5 Ավարտական աշխատանք՝ 10 **Հանրագումարում՝ ոչ ավելի, քան 10 ղեկավարում**
3)	Ամբիոնի ավագ դասախոս	Մագիստրոսական թեզ՝ 3 Ավարտական աշխատանք՝ 10 **Հանրագումարում՝ ոչ ավելի, քան 10 ղեկավարում**
4)	Ամբիոնի դասախոս	Մագիստրոսական թեզ՝ 0 Ավարտական աշխատանք՝ 10
5)	Ամբիոնի ասիստենտ	Չի թույլատրվում

2) Հաստատել ժամավճարային կարգով դասավանդման հետևյալ ժամային դրույքաչափերը.

	Բեռնվածության տեսակը	Ժամային դրույքաչափը
1.	**Դասախոսական կազմի բոլոր տարակարգերի համար**	
	Լսարանային 1 ժամը	4500 ՀՀ դրամ
	Արտալսարանային 1 ժամը	2000 ՀՀ դրամ
2.	**Օտարերկրացիների համար օտար լեզվով**	
	Լսարանային 1 ժամը	9000 ՀՀ դրամ
	Արտալսարանային 1 ժամը	4000 ՀՀ դրամ

(աղյուսակի 2-րդ կետի փողերը լրաց. 05.03.2024 N 7 - 5)

3) Դասախոսական կազմի անհատական բեռնվածությունները, անկախ կիսամյակային բաշխվածությունից, հաշվարկել լսարանային ժամերի հանրագումարով՝ պահպանելով կիսամյակների լսարանային ժամերի սահմանված հարաբերակցությունը:

4) Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները հաստատելու մասին» N 3 որոշումը:

3. Ուսումնական բաժնին՝ իրականացնել ամբիոնների դասաժամերի վերաբաշխում կիսամյակների միջև տարբեր կրթական ծրագրերում՝ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված 4-րդ կետի նորմատիվների ապահովմամբ:

4. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021-2022 ուսումնական տարվանից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2021 թ. ապրիլի 14
Երևան